Ուղիղ, հատված, Ճառագայթ, բեկյալ գծեր

Ուղիղը ծայրակետեր չունի:

Ուղիղ-չունի n՛չ սկիզբ, n՛չ էլ վերջ:

Օրինակ՝ հորիզոնը:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

a ուղիղ



Հատվածը ուղղի մաս է: Այն ունի 2 ծայրակետ:



Հատվածը ունի սկիզբ, ունի վերջ:

- Հատվածը գծելու համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կստանանք A և B ծայրակետերով հատված: Ասում ենք AB հատված:
- Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A,B,C,D,…

Գծապատկերով նշում ենք հատվածն ամբողջությամբ:

AB հատված

Եթե AC հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, իսկ BC հատվածինը՝ 8 սմ 4 մմ, ապա AB հատվածի երկարությունը կլինի՝

| AB |=3 սմ 2 մմ+8 սմ 4 մմ=11 սմ 6 մմ

Ճառագայթը ուղղի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

Ճառագայթը ունի սկիզբ, բայց չունի վերջ:

A ճառագայթ

Օրինակ՝ արևի ճառագայթը:

Բեկյալ գծեր



Հաջորդաբար իրար միացած հատվածները կազմում են մի պատկեր, որը կոչվում է **բեկյալ գիծ**, իսկ այդ հատվածների երկարությունների գումարը կոչվում է բեկյալ գծի երկարություն:



Եթե AB հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, BC հատվածինը՝ 4 սմ 3 մմ, իսկ CD հատվածինը՝ 5 սմ 4 մմ, ապա բեկյալ գծի երկարությունը կլինի՝

3 սմ 2մմ+4 սմ 3 մմ+ 5 սմ 4 մմ =12 սմ 9 մմ:

Առաջադրանքներ

1. AC հատվածի երկարությունը 4 սմ 7մմ է, BC հատվածինը՝ 10 սմ 4 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը:

4սմ 7մմ+10սմ 4 մմ=14սմ 11մմ=15սմ 1մմ

2. AB հատվածի երկարությունը 27 սմ 6 մմ է, AC հատվածը՝ 8 սմ 4 մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:

27սմ 6մմ -8սմ 4մմ=19սմ 2մմ

3. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե |AD|=125 մմ, |AB|=25 մմ, |BC|=55 մմ:

125-25-55=45

CD=45մմ



4. Հաշվիր BC հատվածի երկարությունը, եթե |AD|=150 մմ, |AB|=35 մմ, |CD|=52մմ:

150-35-52=115-52=63
BC=63մմ

5. Քանի՞ ճառագայթ կառաջացնեն երկու հատվող ուղիղները: 4



6.Լրացրու բաց թողնված բառերը:

Ճառագայթը ուղղի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է: Ճառագայթը ունի սկիզբ, բայց չունի վերջ:

7. Լրացրու բաց թողնված բառը(բառերը):
Հատվածն ուղղի այն մասն է, որն ունի 2 ծայրակետ :

8. Հաշվեք

բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը 5 սմ 4 մմ է, BC հատվածինը՝ 5 սմ 8 մմ, իսկ CD հատվածինը՝ 7 սմ 5 մմ:

5 սմ 4 մմ+ 5 սմ 8 մմ+7 սմ 5 մմ=17սմ 17մմ=18սմ 7մմ